

**ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼ – ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

ԽԱԶԱՏՏՐՅԱՆ Ս. Է.

Վերջին տարիներին գենդերային հիմնախնդիրները առավել, քան երբեք դարձան սոցիալական գիտությունների, այդ թվում և հասարակագիտության ուսումնասիրության առարկա, ինչը պայմանավորված է համաշխարհային սոցիալական փոփոխություններով, որոնց հետևանքով սեռային մասնաբաժանման և գենդերային¹ նույնականացման հետ կապված հիմնահարցերը սկսեցին նորովի մեկնաբանվել: Գենդերային հարաբերությունների ոլորտում իրականացված գիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ կնոջ և տղամարդու սոցիալական կարգավիճակներն ու դերերը մեծապես պայմանավորված են ինչպես այս կամ այն քաղաքական վարչակարգի յուրահատկությամբ, պետության սոցիալական քաղաքականությամբ, կնոջ և տղամարդու քաղաքական և տնտեսական մասնակցության հրամայականներով, այնպես էլ տվյալ հասարակության սոցիոմշակութային առանձնահատկություններով՝ արժեքներով և նորմերով, ավանդույթներով, սովորույթներով²:

Եթե խորհրդային շրջանում գենդերային ինքնության որոշարկման հարցում գերիշխող էր պետության դերը, որն էլ կարգավորում էր կնոջ և տղամարդու սոցիալական կարգավիճակներն ու դերերը, իսկ գենդերային մասնաբաժանումը մեկնաբանող համեմատաբար անաչառ դիսկուրս էին սոցիալական գիտությունները, ապա հետխորհրդային շրջանում վարչափրամայական հասարակարգի փլուզման հետևանքով պետությունը դադարեց վերահսկել հանրային կյանքի շատ ոլորտներ, այդ թվում և գենդերային հիմնախնդիրները, որոնք դարձան միմիայն հասարակական դիրքորոշման խնդիր: Ներկայումս գենդերային ինքնության ձևավորման մեջ մեզանում մեծ դեր ունեն գանգվածային լրատվամիջոցները, շուկան, քաղաքական ընտրախավը, ինչպես նաև հայ սոցիումին բնորոշ ավանդույթները, սովորույթները, կարծրատիպերը: Վերոնշյալ երկու հասարակարգերի գենդերային դիսկուրսի համեմատական վերլուծությունը թույլ է տալիս պարզել ինչպես հայ հասարակության գենդե-

¹ Նշենք «գենդեր» և «սեռ» հասկացությունների իմաստաբանական տարբերությունը. եթե «սեռը» բնութագրում է կնոջ և տղամարդու կենսաբանական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, ապա «գենդերն» արտահայտում է սեռի սոցիալ-հոգեբանական և մշակութային հայեցակետերը՝ սոցիալական դերերն ու կարգավիճակները, վարքային մոդելները, հոգեբանությունը:

² Գենդերային ինքնության ձևավորման վրա սոցիոմշակութային գործոնի գերիշխող ազդեցության վերաբերյալ տե՛ս Կ. Հորնիի «Կանացի հոգեբանություն» աշխատությունը (<http://www.pseudology.org/Psychology/Horney-GenskayaPsyho/index.ht>), **Хорни К.** Социокультурная теория личности/в кн. **Хелл Л., Зиглер Д.** “Теории личности”, Питер, 2007, с. 254-269).

րային ինքնության, այնպես էլ այդ ոլորտում իրականացվող՝ պետության սոցիալական քաղաքականության փոխակերպումները:

Խորհրդային ժամանակահատվածում, ինչպես հայ իրականության մեջ, այնպես էլ խորհրդային մյուս երկրներում, գենդերային ինքնության քաղաքականությունը դիտարկվում էր մեկ համընդհանուր դիսկուրսի «խորհրդային ինքնության» լույսի ներքո: Յուրաքանչյուր քաղաքացի, անկախ սեռային պատկանելությունից, նախ և առաջ նույնականացվում էր խորհրդային պետության, սոցիալիստական հասարակության և դրանցից բխող արժեքների ու նորմերի հետ: Այլ կերպ ասած, գենդերային ինքնությունը տարրալուծված էր «առավել բարձր կարգի» ինքնության՝ սոցիալ-քաղաքական ինքնանույնացման գաղափարախոսության մեջ: Խորհրդային հասարակարգի փլուզումից անցել է երկու տասնամյակ, սակայն հայ հասարակության մեջ որոշ խմբեր դեռևս շարունակում են տառապել նախկին հասարակարգի «կարոտախտով» և ունեն «ուժեղ ձեռքի» իշխանության ցանկություն³: Մյուս կողմից, թեև սոցիալիստական հասարակության արժեքներն ու նպատակները համընդհանուր և պարտադիր էին Խորհրդային Միության բոլոր քաղաքացիների համար՝ անկախ սեռային պատկանելությունից, խորհրդային երկրի քաղաքացու սոցիալական կարգավիճակը նաև տարբերակվում էր՝ կախված մարդու սոցիալական ծագումից, հասարակության շերտավորման կառույցում նրա զբաղեցրած դիրքից, տարիքից, սեռից ու ազգային կամ էթնիկ պատկանելությունից: Պետությունը քաղաքացիներին տարբերակում էր նաև ըստ գենդերային պատկանելության՝ այդպիսով ձևավորելով կնոջ և տղամարդու գենդերային ինքնության խորհրդային դիսկուրս: Հասարակագիտական հետազոտությունները վկայում են այն մասին, որ թեև այդ ժամանակահատվածում խորհրդային հասարակարգը բնորոշվում էր կանանց՝ արտադրության ոլորտներ զանգվածային ներգրավմամբ⁴, այնուհանդերձ՝ առկա էր գենդերային խտրականություն տնտեսական (մասնավորապես, կանանց աշխատավարձը կազմում էր տղամարդկանց միջին վարձատրության 75%-ը), քաղաքական ոլորտներում (կանայք գրեթե ներկայացված չէին պետական իշխանության վերին օղակներում): Այս ժամանակահատվածի կնոջ գենդերային ինքնության մեջ հատկանշական է «աշխատող մոր» հայեցակարգի ներմուծումը, ինչը, որպես այդպիսին, կայուն դարձավ 1930-1950 թթ.⁵: Արդեն ուշխորհրդային շրջանում այդ գաղափարախոսությունն ամրապնդվեց սոցիալական քաղաքականությամբ՝ այնպիսի սոցիալական ծրագրերի ներդրմամբ, որոնք խրախուսում էին,

³ Այդ մասին տե՛ս **Погосян Г.** *Армянское общество в трансформации*, Е., 2003, с. 361.

⁴ *Բրիտանացի հասարակագետ Է. Գիդդենսի կողմից կատարված համեմատական գենդերային վերլուծությունը խորհրդային և արևմտաեվրոպական երկրների միջև տե՛ս Վ. Գ. Գիդդենսի «Женщины в Советском Союзе и в Восточной Европе»-ում և կն.: Гидденс Э. Социология, М., 1994, с. 170-171.*

⁵ **Темкина А., Роткирх А.** *Советские гендерные контракты и их трансформации в современной России* (Социс, 2002, N II, с. 4-15).

մի կողմից՝ կնոջ զբաղվածությունն ու մասնագիտական առաջընթացը, մյուս կողմից՝ «մայրության» հայեցակարգը: Կնոջ՝ որպես աշխատող քաղաքացու և մոր դերային հարաբերակցությունն այս շրջանից դառնում է հանրային քննարկման, ինչպես նաև հասարակական գիտությունների դիսկուրս-վերլուծության առարկա:

Խորհրդային պետության գենդերային քաղաքականության ազատականացումն արդեն նկատելի էր XX դ. երկրորդ կեսից սկսած, երբ որպես կնոջ գենդերային ինքնության մեջ առաջին արմատական քայլ կարելի է դիտարկել հղիության արհեստական ընդհատման ապաքրեականացումը: Նոր գենդերային քաղաքականությունը կնոջն արտոնում էր ինքնուրույն որոշումներ կայացնել երեխա ունենալու հարցում: Ծնելության խթանման էին ուղղված տարբեր սոցիալ-քաղաքական ծրագրեր, արտոնություններ՝ հղիների ու մայրերի համար: Այդպիսով, խորհրդային պետությունը սոցիալական քաղաքականության միջոցով մեծապես նպաստում էր կնոջ՝ որպես մոր սոցիալական դերի ամրապնդմանը: Այդ քաղաքականությունը, սակայն, չամրապնդվեց սեռական դաստիարակությամբ ու կրթությամբ, ինչի հետևանքով ձևավորվեց «հղիության արհեստական ընդհատման մշակույթը»: Այդուհանդերձ, գենդերային որոշարկումը աստիճանաբար դուրս էր գալիս պետության անընդհատ վերահսկողությունից և վերածվում «գուտ անձնական որոշման առարկայի» կամ՝ լիազորվում ընտանիքի ինստիտուտին: Թեև այս շրջանի պաշտոնական դիսկուրսում գերիշխում է ընտանիքի՝ որպես հասարակության «հիմնական բջիջ» լինելու գաղափարը, միաժամանակ, քննադատական դիսկուրսում՝ սոցիալական գիտությունների շրջանակում, առաջ է քաշվում մոր և աշխատող կնոջ սոցիալական դերերի համատեղելիության, ինչպես նաև «միայնակ մայրության» հիմնախնդիրը: Տղամարդու դերը նույնպես քննադատության է ենթարկվում, որը բավարար չափով չի կարողանում իրագործել ընտանիքը կերակրելու և պաշտպանելու իր գործառույթը, ինչի հետևանքով տեղի է ունենում նաև արական ինքնության ճգնաժամ⁶: Այնուամենայնիվ, գենդերային ինքնության նույնիսկ ուշխորհրդային ազատական քննադատությունն ըստ էության մեծապես հայրիշխանական բնույթ ունեւր, այսինքն, արտացոլում էր կանացիության և առնականության «ավանդական» պատկերացումները:

Անցումային շրջանի հայ հասարակությանը բնորոշ սոցիալ-տրնտեսական և սոցիալ-քաղաքական համակարգային փոխակերպումներն արտացոլվեցին նաև սոցիոմշակութային, մասնավորապես՝ գենդերային հարաբերությունների ոլորտում: Գենդերային ինքնությունը մինչ օրս ենթարկվում է փոփոխությունների, փոխակերպվում են գենդերային իրավունքներն ու պարտականությունները: Փոփոխվում է օրենսդրությունը. մասնավորապես ընտանեկան իրավունքի ասպարեզում տեղի է ունենում գենդերային հավասար-

⁶ Здравомыслова Е., Темкина А. Кризис маскулинности в позднесоветском дискурсе (О мужественности. Сб. Статей, сост. Ушакин С. М., М., 2002, с. 432-451).

րակշռություն պահպանող սոցիալական դերերի վերաբաշխում: Մյուս կողմից, առաջանում են նոր գաղափարախոսություններ, որոնք ներառում են կանացիության և առնականության տարբեր, հաճախ իրարամերժ պատկերացումներ: Այսպես, ազատական-ֆեմինիստական դիսկուրսի հիմքում ընկած են գենդերային ինքնության մասնաբաժանման՝ կնոջ և տղամարդու սոցիալական անհավասարության կենսաբանական և մշակութաբանական առանձնահատկությունները: Ի տարբերություն ազատական ֆեմինիզմի՝ արմատական ֆեմինիզմի հիմքում ընկած է սկնհայտ «հայրիշխանական» գաղափարախոսության քննադատությունը, համաձայն որի՝ հասարակական հարաբերությունների հիմքում ընկած է տղամարդու կողմից կնոջ շահագործումը՝ չվարձատրվող տնային աշխատանքը, որի արտացոլումը ընտանիքի սոցիալական ինստիտուտն է: Եթե ազատական ֆեմինիզմի շրջանակում ավանդական է համարվում կնոջ՝ որպես տնային տնտեսուհու սոցիալական դերը, որը սահմանափակվում է հոգատար ամուսին, մայր, ընտանեկան ջերմ մթնոլորտ և օջախի պահպան լինելով, ապա արմատական ֆեմինիզմը⁷ կնոջը նույնականացնում է «տղամարդու շահագործման օբյեկտի» հետ: Նորազատական գենդերային ավանդապաշտության գաղափարախոսությունը, որը կարծես համադրում է նախորդ երկուսի կառուցողական կողմերը, հիմնված է երկու սկզբունքի վրա. մի կողմից, ընդունվում է այն փաստը, որ կանայք և տղամարդիկ ունեն հավասար իրավունքներ, կարող են համատեղել տարբեր սոցիալական դերեր՝ և՛ էքսպրեսիվ և՛ ինստրումենտալ, մյուս կողմից՝ ընդունվում է, որ կինը տղամարդուց տարբերվում է իր բնական առաքելությամբ, ֆիզիոլոգիական նշանակությամբ, ինչը սահմանափակում է կնոջ և տղամարդու կարիերային հնարավորությունները հանրային ոլորտում: Նորպետական ավանդապաշտությունը կանանց որակում է որպես քաղաքացիների հատուկ կարգ, որը կարիք ունի հայրախնամ սոցիալական քաղաքականության: Այս գաղափարախոսության շրջանակում ընդգծվում է կանանց՝ գենդերային պայմանավորվածություն ունեցող քաղաքացիական պարտքը՝ ազգի ժողովրդագրական վերարտադրությունը: Տնային տնտեսության ղեկավարումը և երեխաների դաստիարակությունը ևս դիտարկվում են պետական շահի, պետական հոգածության լույսի ներքո:

Հարկ է նշել, որ ժամանակակից հայ հասարակության մեջ, սկսած անցումային շրջանից, գենդերային հիմնախնդիրների շրջանակում շարունակվում է մեծ ուշադրություն հատկացվել կնոջ սոցիալական դերին, «մայրության» հայեցակարգին, ինչպես գիտական դիսկուրսում, այնպես էլ պետական, մասնավոր և քաղաքացիական հասարակության հատվածներում՝ նոր շեշտադրումներով ու վերաիմաստավորումներով: Այդ առումով հատկանշական են վերջին տարիներին գենդերային հիմնախնդիրների թեմատիկայով տարբեր գիտական աշխատությունների հրատարակումը, ինչպես նաև տեղական,

⁷ Ֆեմինիզմի ուղղությունների վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս <http://ru.wikipedia.org/wiki/%D0%A4%D0%B5%D0%BC%D0%B8%D0%BD...> [21.05.2009]:

տարածաշրջանային և միջազգային տարբեր գիտաժողովների կազմակերպումը, որոնցում կարևորվում են հայ կնոջ դերը արդի ընտանիքում, երկկարիերային ընտանիքների հիմնախնդիրները, դրանցում գենդերային նոր վարքային մոդելների ներմուծումը (օրինակ՝ հայ ընտանիքի մայրը, որը կարող է միաժամանակ հանդես գալ գործնական կնոջ դերում, ինչը, սակայն, տարբերվում է Արևմուտքում տարածված՝ «գործարար կնոջ» սոցիալական դերից), կնոջ սոցիալական ժամանակի և ընտանիքի պլանավորման հիմնախնդիրները և այլն: Պետությունը թերևս շարունակում ավանդականորեն պահպանել հայրախնամ վերաբերմունք կնոջ հանդեպ. դրա դրսևորումներից են վերջին տարիներին սոցիալական ապահովության և առողջապահության բնագավառներում իրականացվող մի շարք ծրագրեր, որոնք ուղղված են հատկապես մայրության խթանմանը (այդ սոցիալական ծրագրերից կարևոր է վերջին տարիներին մեզանում պետականորեն ընդունված անվճար ծննդօգնության ծրագիրը): Մասնավոր հատվածը ևս փորձում է սոցիալական պետության արժեքներից բխող որոշակի ծրագրեր իրագործել (այս առումով հատկանշական է «Վիվասել-ՄՏՍ» ընկերության փորձը, որը ոչ միայն պարբերաբար իրականացնում է տարբեր ակցիաներ, այլև դրանք տարբեր PR-տեխնոլոգիաների, հատկապես գովազդի միջոցով լուսաբանում է և իրազեկ դարձնում լայն հասարակայնությանը⁸): Քաղաքացիական հատվածում գենդերային հիմնախնդիրների նրկատմամբ ուշադրության մասին են վկայում տարբեր, մասնավորապես հասարակական կազմակերպությունների ստեղծումը մեզանում և դրանցում առաջնորդ-կանանց մեծ թիվը: Այսպես, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան⁹ պետական քաղաքականության մեջ գենդերային բաղադրիչի ինտեգրումը և օրենսդրության գենդերային փորձաքննությունն իրագործում է օրենսդիրների, պետական ծառայողների, հասարակական կազմակերպությունների և կուսակցությունների առաջնորդների, լրագրողների գենդերային իրազեկության բարձրացման միջոցով՝ պարբերաբար կազմակերպելով կլոր սեդաններ, սեմինարներ, մամլո ասուլիսներ, խորհրդաժողովներ, կատարելով հիմնարար հետազոտություններ և հրատարակելով մատենաշարեր ու ուսումնական ձեռնարկներ հայ հասարակության գենդերային հիմնախնդիրների տարբեր հայեցակետերի վերաբերյալ: Նշենք, որ անցումային և հետանցումային շրջանի գենդերային դիսկուրս ամենագործուն իրականացնողը մեզանում քաղաքացիական հասարակության հատվածն է:

Այնուհանդերձ՝ գենդերային հիմնախնդիրների ընկալումն այսօր միանշանակ չէ հասարակայնության տարբեր սոցիալական խմբերի ու խավերի դիրքորոշումներում: Ժամանակակից հայ հասարակության գենդերային մշակույթը ձեռք է բերել անցումային շրջանի մը-

⁸ Այդ միջոցառումներից հատկանշական է ծրագրի ղեկավարների կողմից գեղեցկության և մայրության տոներին նվիրված ամենամյա, պարբերական այցերը ծննդատներ:

⁹ Տե՛ս <http://www.aawue.am/page.php?74/>

շակույթին բնորոշ «երկարժեքություն» («ամբիվալենտություն»)¹⁰: Խնդիրն այն է, որ նախորդ հասարակարգից բխող հին արժեքները դեռևս լեգիտիմ են և ինտեգրացված պահպանվում են, քանի որ մշակույթի ոլորտը, ի տարբերություն տնտեսական կամ քաղաքական ոլորտների, ավելի դանդաղ է ենթարկվում փոփոխությունների, ինչպես նաև մեզանում որոշ սոցիալական խմբեր, ինչպիսիք են միջին և հատկապես ավագ սերունդը, ձևավորվել և իրենց առաջնային սոցիալականացման փուլն անցել են հենց խորհրդային հասարակության մշակույթի ազդեցության ներքո: Մյուս կողմից՝ մենք ընդունում ենք նոր արժեքներ ու նորմեր, որոնք դեռևս չեն հասցրել յուրացվել, «ընդունվել», «դառնալ լեգիտիմ» հայ հասարակության լայն շերտերի կողմից: Այսպես, օրինակ, ավագ սերնդի ներկայացուցիչները հաճախ չեն ընդունում ժամանակակից հայ գործունյա կնոջ սոցիալական դերը, նրա գործնական նկրտումները՝ դրանք համարելով հայ կնոջ և հայ ընտանիքի համար օտար արժեքներ: Թերևս այստեղ տեղին է հիշել գործառնական կառուցվածքաբանության ներկայացուցիչ, ամերիկացի հասարակագետ Ռ. Մերտոնի «անոմիայի»¹¹ հայեցակարգը, որի շրջանակում անցումային երկրների մշակույթը կարելի է որակել որպես «անոմիկ»: Պատահական չէ, որ այսօր ոչ միայն գենդերային, այլև սոցիալական կյանքի մյուս ոլորտներում է նկատելի այդ միտումը՝ նպատակների և սոցիալապես խրախուսելի միջոցների հակասությունը: Իրականում, այդ հակամարտությունն արժեքային է, որը մղվում է երկու մշակութային տիպերի՝ ավանդականի և արդիականի¹² կառուցվածքային տարրերի միջև: Այսպես, այսօր հայ հասարակությունում միաժամանակ առկա են և՛ հայրիշխան, և՛ մայրիշխան, և՛ հավասարազոր (եզալիտար) ընտանիքներ, որոնցից յուրաքանչյուրը թելադրում է իր գենդերային հարաբերություններն ու ինքնությունը, կնոջ և տղամարդու սոցիալական դերերի և կարգավիճակների բաշխումը, ինչը վկայում

¹⁰ *Մշակույթի ամբիվալենտության (լատ. ambo-երկու, valentia-ուժ) հայեցակարգը տե՛ս Die Kultur der Gegenwart bei Zygmunt Bauman, Reddig M., Kron T. In Junge M, Kron T. (Hrsg.) Zygmunt Bauman, Soziologie zwischen Postmoderne, Ethik und Gegenwartsdiagnose. 2., erweiterte Auflage. VS Verlag, Wiesbaden, 2007, S. 401-425.*

¹¹ *Անոմիա (ֆրանս. - anomie) բառացիորեն նշանակում է առանց նորմերի: Առաջին անգամ հասարակագիտության շրջանակում գործածության մեջ է դրվել ֆրանսիացի հասարակագետ Է. Դյուրկհեյմի կողմից: Ամերիկացի հասարակագետ Ռոբերտ Մերտոնը, զարգացնելով այդ մոտեցումը, շեղվող վարքի սոցիալական որոշարկումը փորձեց տալ սոցիալական նպատակների և այդ նպատակների հասնելուն ուղղված սոցիալապես խրախուսելի միջոցների միջև հակասությամբ. տե՛ս Մերտոն Ք. Социальная структура и аномия [Социология преступности (Современные буржуазные теории), М., 1966, с. 299-313].*

¹² *Արդիական մշակույթի նմուշներն են ունիվերսալիզմը, ձեռքբերովի կարգավիճակները, յուրահատուկ սոցիալական դերերը, աֆեկտիվ չեզոքությունը, կողմնորոշումը դեպի «Ես» ինքնությունը: Ավանդական մշակույթին բնորոշ են համապատասխանարար՝ պարտիկուլյարիզմը, ի ծնե կարգավիճակները, տարրալուծված սոցիալական դերերը, աֆեկտիվությունը, կողմնորոշումը դեպի խումբը. տե՛ս Функциональный императивизм: Парсонс Т. (Структура социологической теории Тернер Дж., М., 1985, с. 68-69).*

է հենց վերոնշյալ արժեքների երկակիության մասին: Մեր նպատակներն արդիական են, դրանց հասնելու ուղիները՝ ավանդական: Այդ առումով հայ հասարակությունն այսօր կանգնած է ավանդականի ու արդիականի, հնի ու նորի երկընտրանքի առջև:

Մոցիոմշակության փոխակերպումների համատեքստում, համաշխարհային մարտահրավերների հորձանուտում միայն ճիշտ և կանխամտածված սոցիալական ընտրությունը, շահերի ու նպատակների գիտակցումը կարող են դառնալ հայ հասարակության կողմնորոշիչ: Միայն սոցիալական շահերից բխող պետական քաղաքականությունը կարող է ապահովել ավանդականի ու արդիականի արժեքների միջև հակասության վերացումը կամ գոյակցությունը, որը կարող է նվազեցնել մասնավորապես հայ հասարակության գենդերային հիմնախնդիրների ոլորտում առկա լարվածությունը, գենդերային խրտրականությունը՝ այդպիսով նպաստելով սեռային համերաշխությանն ու սոցիալական ինտեգրացիային:

ГЕНДЕРНАЯ ИДЕНТИЧНОСТЬ В КОНТЕКСТЕ СОЦИАЛЬНО-ПОЛИТИЧЕСКИХ ТРАНСФОРМАЦИЙ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА

ХАЧАТРЯН С. Э.

Резюме

Сравнительный анализ советских и постсоветских гендерных дискурсов показывает, что в условиях социалистического общества процессы гендерной идентификации интерпретировались преимущественно в рамках концепции «советского гражданства». Соответственно, политика гендерной идентичности была направлена на осуществление социально-экономических, политических и идеологических целей советского государства в целом. Гендерный дискурс переходного периода армянского общества, по сравнению с предыдущим, отличается либерализацией социальной политики в этой сфере, а также диверсификацией гендерных подходов, которые, однако, часто взаимоисключают друг друга, и в этом смысле армянскому обществу предстоит разрешить дилемму традиционных и инновационных гендерных ценностей и норм.